

ՏՆՕՐԿԵՆ-ԵՍՏՐԱԴՐԱԳՅՑ

Շ. ՄԱՄՈՒՐԻԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարկան	500	դր.
Վեցամսայ	250	»
Մսամսայ	150	»
Երրոսամսան արկ.	70	»

Բաժանորդագրութիւնը կ'սկսի ամիս ամսոյ ձիւն 15

100 ՓԱՐԱ



Fondateur
M. MAMOURIAN
Directeur-Rédacteur en chef
H. MAMOURIAN
Arévélian Mamoul,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

Օրաթերթ ազգային եւ ֆաղափական

100 ՓԱՐԱ

ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆ ԶԷ ՎԵՐՋԱՅԱԾ

Անգլիա լրջօրէն ձեռք առած կ'երևի Թուրքիոյ հարցը: Պրանսա՝ հաւանա- կան է որ ըմբռնած ըլլայ թէ շոյանք ու յարգանք անցոր կ'գտնուին կասեցը- նելու արիւնարբու և ոճրագործ տարր մը՝ որ միտիայն սլփի ներքև կ'ստոր- նանայ ու կ'քծնի Իտալիա բնականաբար պատրաստ պիտի ըլլայ Անգլիոյ որ- դեզերիք քաղաքականութեան հետեւի և երկդիմի ընթացք մը չընեն:

Սակայն Անգլիոյ մէջ հասարակաց կարծիքն զգրգումը, Անգլիոյ կողմէ ձեռք առնուելիք միջոցներն որիէ կերպով մը դեռ չեն յաջողած Հայոց ապա- հովութիւն ներշնչել:

Կիլիկիայէ հասնող լուրերն ու ճամբորդներն վարդապոյն չեն ներկայացնել կիլիկիոյ վիճակը:

Կացութիւնը դեռ պարզուած չէ: Հայութիւնն մշտապէս սարսափի մը տակ կ'է գտնուի Հաճըն ապահովութեան մէջ չգտնուելու և վրդովիչ կցկտուր լուրեր կ'հասնին տեղւոյն հայութեան:

Մեր ստացած վերջին տեղեկութեանց համեմատ Հաճըն պաշարուած է Մուսթաֆա Բէմալի հրոսակաւորներէն, որոնք կանոնաւորապէս զինուած են և նոյն իսկ թնդանօթներ ունին:

Իրաց այս անստոյգ կացութեան առջև, մէկէ ւ ելի պատճառներ ունինք մտահոգուելու, որովհետեւ տեղւոյն Ֆրանսական իշխանութիւնները թէև օգ- նական ոյժեր սկսած են ստանալ, սակայն չենք գիտեր թէ՛ ի վիճակի պիտի ըլլան միանգամ ընդ միշտ փչրելու իրենց դէմ ծառանալու յանգնող չէթէա- կան ոյժերը և բնական է որ մեծ ըլլայ մեր երկիրը, հիմնուելով մտաւոր անցեալի մը փորձառութեան վրայ, որ դարձեալ զոհ չտայ տեղւոյն հայութիւնը:

Կ'ընդունինք թէ՛ հպատակ ժողովուրդներն սիրաշահել, զանոնք հաւատա- ըութեան և արգարութեան միակ յօտրով մը կշռել, ընդունուած և ի գործ դրուած օրէնք մըն է, սակայն այդ դրութիւնն միմիայն կարելի պիտի ըլլար կիրարկել քաղաքակիրթ ազգերու համար, իսկ այն ազգերն որոնք դարերէ ի վեր արգէն ցոյց տուած են իրենց հակութեան և մոլութիւններն, այդ ժող- վուրդներու համար, տարբեր քաղաքականութիւն մը հարկ անհրաժեշտ էր կի- րարկել:

Կիլիկիոյ քրիստոնեայ տարրին հետ, միևնոյն հաւատար չափերով թուրք տարրն եւս կառավարել, կ'տեսնեն թէ՛ ինչ արգիւնքներ յոռոջ բերուա իսկ եթէ զանոնք սիրաշահելու և Հայերն շահախիտու նպատակով որդեգրուեցաւ այդ քաղաքականութիւնն, անոնք իրենց նպատակին կրնան հասած համարուել:

Մարօքի, Ալճիրիոյ, Թունիզի մէջ ի գործ դրուած քաղաքականութիւն մը պէտք չէր առաջնորդ հանդիսանար նաև Կիլիկիոյ համար, որովհետև քրիս- տոնեայ տարրը անհամեմատելի առաւելութիւններ կ'ներկայացնէր և պէտք է ընդունէին թէ՛ անքաղաքակիրթ ու կրթուած ազգերու միջև զանազանութիւն մը հարկ էր դրուել:

Պրանսա՝ այսօր Հայերէ սիրուած և մարդկութեան հիացում ազգող պե- տութիւն մը դարձած է: Համաշխարհային պատերազմին մէջ, Պրանսա անգամ մըն ալ ցոյց տուաւ թէ՛ ինչ մեծ արժանիքներով և յատկութիւններով օժ- տուած ժողովուրդ մըն էր, Պրանսա այսօր արժանի է աշխարհի բոլոր ժող- վուրդներու յարգանքին ու համակրանքին և բնականաբար անոնց շօշափիլի բարեկամութիւններուն:

Այո՛, Հայն կրնայ շատ պնդանալ ու անկարևոր տարր մը նկատուել մեծ պե- տութիւններու հանդէպ և անոնք կարևորութիւն չտան Հայուն համակրանքին ու յարգանքին, բայց այդ մեծ պետութեանց ժողովուրդներն այսօր կը լահագրուին Հայոց դատով, կ'հետաքրքրուին հայոց վիճակով և ուղղակի համակիր վերաբերում մը ունին տառապած ու բազմաշարժար հայ ազգին հա- յար:

Պրանսա այդ ժողովուրդներու կարգին մէջ կ'գտանք և այն հաւատքն ու- նինք թէ՛ ան չպիտի ուզէր որ հայն իր հովանիին ապաստանած պահուն այս խոզութեանց ու կորուստներուն մասնուէր:

Սյդ չարեաց առաջն առնելու համար Կիլիկիոյ քաղաքները, սխալներ գործեցին, չվստահելով հայոց բողոքներուն, տեղեկագիրներուն, յոռոջ բե- րած ապացոյցներուն և դժբաղդար տեսան թէ՛ ինչքան հիմնաւոր էին անոնք:

Պրանսա ամեն առթիւ և ամեն պարագայի կ'յայտարարէ թէ՛ ինք հողային նորանոր գրաւումներ ընելու տրամադիր չէ, որով կ'ընդունին թէ՛ Կիլիկիոյ իր թեւակութիւնն առժամայն է կամ ժամանակաւոր, ուրիշն այդ հողամասերն Թուրքիոն թէ՛ Հայուն կ'պատկանին:

Այսօր պատմական անհերքելի փաստերով ու ապացոյցներով ամբողջ քա- ղաքակիրթ մարդկութիւնն զիտէ թէ՛ Կիլիկիա անբաժան մասն կ'կազմէ Հա- յաստանի, ուրիշն այդ հողամասերու մէջ բնակութիւն հաստատող ժողովուր- դի պաշտպանութեան համար Պրանսայի չափ և թերևս անորմէ աւելի պար- սականութիւն մը կ'ծանրանայ Հայոց վրայ, ինչո՞ւ ուրիշն Կիլիկիոյ Ֆրան- սական իշխանութիւնք յարմար ժամուն ու բոլորին այդ պատրաստակամ ոյժերն չուզեցին գործածել և գէթ Մարաշէ իրենց նահանջի պահուն իրենց գէնքի միտրոնոցներն չյանձնեցին հայերու, փոխանակ փճացնելու և անպաշտպան հայութիւն մը թողնելու բարբարոսներու կրակին ու սուրին տակ:

Անլուծելի ստեղծուած մը, որու լուծումն դեռ չյաջողեցանք գտնել: Այս պայմաններուն և պարագաներուն տակ նոյնքան վտանգաւոր վիճակ

մը ստեղծուած է Հաճընի հայութեան մասին, որմէ լուր մը ստանալ կարելի չըլլար:

Երոզա սխալ դործել, սակայն պէտք է անպարէ և արտանետան կտորակ որոշումներով գործադրութեան դէմ իր որոշումները:

Հայութիւնն իր ակնարկն ակնուպիչ յառած է գէպի Մեծն. Բրիտանիա՝ որմէ միայն կ'յուշայ ու կ'սպասէ փրկութիւն և պաշտպանութիւն:

Հ. Մ.

Վերելի մեր յոյուածը շարուած էր արդէն, երբ ստացանք Կիլիկիայի նորա- գոյն լուրեր անոյս 8 բուսկիրով, որով մեր ենթադրածէն շատ աւելի մեծ է վստահը և երբ անմիջական միջոցներ ձեռք չառնուին, Կիլիկիոյ Հայութիւնն, ինչպէս կ'ըսէ ճանապարհորդ, անմիջական վստահի մը սակ կ'գտնուի:

ՀԱՅՅԵԼԻՔՆ ՄԵՑ

Ժամանակէ մը ի վեր որոշ կարգա- խօսի մը համաձայն, ամեն ճիգ, ջանք ու աշխատութիւն կ'թափուի Պողոս Նուպարը վարկաբերու և անոր մէնմի քայլն սխալ և նոյնիսկ ազգադաւ հա- մարելու:

Բարեբաղդաբար այդ մեծ-հայը վհատել, յուսահատել և զզուել բառե- ընն ընդ միշտ սրբած է իր բառարու- նէն և անկունն ու անվեհեր կ'մնայ պատուէլին վրայ առանց ամենազոյզն կարևորութիւն տալու իրեն դէմ ար- ձակուած ամեն տեսակ աղտոտ և վար- չելի զրպարտութիւններու:

Եւ բնականաբար այս ընթացքն պիտի որդեգրէր, անգամ մըն ալ իր մեծութիւնն ապացուցանելու համար հանուր հայութեան:

Եթէ միթիարական կէտ մը կայ այս ամենու մէջ, այն ալ հայութեան մե- ծամանութեան անոր վրայ ունեցած անասան հաւատքն ու համակրանքն է, նոյնիսկ այն յայտնի կուսակցու- թիւնն որ Պողոս Նուպարն նախատելու և վստացնելու սկզբունքն կ'կիրարկէ ժամանակէ մը ի վեր, իր շարքերուն մէջ լուրջ խորհողներ ունի և ամենքն համակարծիք չենմղուած աղտոտ պայ- քարին:

Հետաքրքիր էի ճանչնալ այն ան- ճըն որ Պողոս Նուպարի դերն պիտի կրնար ստանձնել, եթէ երբէք այդ մեծ մարդն տեղի տուած ըլլար և ը- սէր, «հրամեցէք, պարոններ, օհա ես կ'հեռանամ, գրաւեցէք ձեր աչքով կու- թեան առարկայ եղող աթոռս, որու համար յանկարծ զինազարբէն ետք անքաղաքապէտ ու անփորձ կ'հոչակէք զիս...»:

Ո՞վ պիտի ըլլար արդեօք այդ կուսակցութեան պատրաստած մարդը այդ պաշտօնին, զարմանալի է որ մին- չև այսօր չհամարձակեցան մէկը ցոյց տալ:

Է՛հ, այսքան ալ քննախնդրութիւն, այսքան ալ անհեռաւստութիւն երբէք տեսնուած չէ, ինչո՞ւ քիչ մըն ալ համ- ընութիւն չեն ունենար, ինչո՞ւ չեն սպասեր իրենց աղ աղտոտութիւններն մեր կազմելիք տան մէջ պտթկալու, չեն ըմբռնել որ այսօր Պողոս Նուպար- ի տեղն բռնող որմէ մէկը չունինք և չեն կուսներ որ իրենց պատրաստած անձն, եթէ երբէք գոյութիւն ունի, և անոր պաշտօնն ստանձնելու յանդը- նութիւնն ունենայ, չպիտի համարձա- կի ներկայանալ համաձայնական պե- տութեանց մօտ, պաշտպանելու հայոց դատն և եթէ համարձակ իսկ, չպիտի յաջողի ու խայտատակէ հայութիւնն յամակ:

Արդեօք կուզէին որ այդ անձն վերջի վերջոյ որ մըն ալ վնասուէր պետութեանց ներկայացուցիչներուն քովէն...
ԵՍ

ՄՈՒՇԵՂ ՍՐԲԱԶԱՆ ԻԶՄԻՐԻ ՄԵԶ

Ք Ա Ր Ո Ջ Ը

Միրելի Հայրենակիցներ, Պատմութիւնը ճշմարտութիւններ կ'աւանդէ մեզիս բարեկրկան հան- զամանք ունին Ազգի մը համար այդ ճշմարտութիւնները մասնաւոր նշանա- կութիւն մը կ'առնեն երբ կը բղիւն անցելուն մէջ իրեն բազմակից եղած ժողովուրդի մը պատմութիւնն է:

Եթէ մենք Հայիրս քիչ մը աւելի հա- լատքով կը նայինք հին կտակարանի գիրքերուն վրայ, պատճառը մեր և հրեայ ազգին միջև գոյութիւն ու- նեցող քաղաքական կեանքի նմանու- թիւնն է, տառապանքի և դժբաղդու- թեան մէջ նոյնութիւնն է: Մշտնջենական հալածանքի, կոզո- պուտի, տարագրութեան ու կտորած- ներու առարկայ այդ անվհատ ժողո- վուրդը սակայն, ինչպէս մերիքը, գիտ- ցաւ միշտ իր յոյսի և հաւատքի աչ- քերը յառած պահել իր առաջնորդին և իր սեփական Աստուծոյն վրայ:

Ամէն անգամ երբ այդ հալածական ժողովուրդը իր սիրուած հայրենիքն բռնանջատ, քշուած է գէպի անձա- նօթ օտար հորիզոններ, ամէն անգամ երբ բռնագատուած է ձեղքիլ արիւնի և արցունքի կարմիր ծովեր, ամէն ան- գամ երբ իր ազգային նուագարանն- ըր կախուած մնացած են Սփրստի ե- զերքներու արմաւենիներու վրայ, մարգարէին ձայնը զօրեղապէս հնչե- լով կրցած է հաւատք ներշնչել անոր «Անոնք որ արցունքով կը սկսանեն ուրախութեամբ պիտի հնձնին»:

Հրեայ տարաբաղդ ժողովուրդը, ամէն անգամ երբ գտնուեցաւ իր սե- փական արցունք և արիւնով կազմը- ւած իճիրու առջև, յիշեց սողոստի- քուն պատգամը «Ես այսօր կուլում, կ'ստատապիմ, կ'մորթաուիմ, կ'արիւ- նիմ, բայց հաւատք մ'ունիմ ազգային որ իմ միակ նեցուկս է, արցունքով և արիւնով սերմանուածը իր ետեւէն պի- տի բերէ ուրիշութեան հունձքը»:

Հայ ժողովուրդին համար սակէ ա- յելի սրտապնդող, տակէ աւելի հրա- հանգիչ պատգամ մը չէր կրնար տրու- ուել: Եւ արդէն բացի այդ անխորատ կիլի հաւատքէն, ոչ մէկ ոյժ, ոչ մէկ ազգայ չի պիտի կրնար կամգուն պա

ԿԻՆԿԵԱՆ ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿ

Սպառնալիքը անմիջական

Արևած, 8 Մարտի 1920

Մարաշի աղետալի դեպքին նմանը կատարուելու վտանգին տակ կը գրտ շուրի Կիլիկիա Ամեն կողմէ չէթէ-նեք, որոնք թուրք կառավարութիւնը կը ներկայացնեն, հազարաւորներով Կիլիկիոյ ամբողջ սահմանին մէջ մտած են, և գիւղերու մէջ գործի սկսած:

Այսօր Հաճընէն ստացուած պաշտօնական հեռագրերներ, Հաճընոյ հաշարակ գիւղերու վրայ յարձակում ելած ըլլալը կը ծանուցանեն, այդ գիւղերը Հաճընէն 4.5 ժամ հեռաւորութիւն ունին, կասկած չկայ թէ Մարաշի նման նախ գիւղերը պիտի ոչնչացնեն և վերջը պիտի յարձակին զլիսաւոր կեդրոններու վրայ:

Թուականէս 5-6 օր առաջ Իսլահիլէն 3 ժամ հեռու, Սախչէ-Կէօզի, այլ անունով, Քէֆէրտին կոչուած գիւղը խողովորուցուա Սուրշիտ Աղաի և իր որդւոյն մասնակցութեամբ Այս Խուրշիտ աղան ֆրանսական կառավարութեան կողմէ յոյժ յարգուած ըլլալով, իրեն և իր որդւոյն տրամադրութեան տակ կառավարութեանը որոշուած էին մեծ թուով զէնքեր և իր մարդերէն կազմուած 40 հոգինոց ժանտարմախ խումբ մը չէթէնները հետապնդելու և Հայերը պաշտպանելու համար:

Քանիցս ազգային իշխանութեանց կողմէ բողոքուեցաւ վտանգութիւն չընթայելու համար Խուրշիտ աղայի և իր նմաններուն, բայց տեղական կառավարութիւնը միշտ կը պնդէր թէ անոնք հաւատարմաբար պիտի ծառայեն, ահա իրականացաւ մեր բողոքը, Նոյն Խուրշիտ աղայի և իր մարդոց կողմէ սպաննուեցան 67 հոգի, որոնցմէ երեքը վիրաւոր կիներ, մեռաւ կարծուելու համար դիակներու մէջ մնացած, գիշերանց փախչելով հաս եկան մեզի պատմելու սոյն քստմնելի ջարդը:

Տեղւոյս կառավարութեան դիմումներ եղած են այս մասին, սակայն դժբախտաբար թուրքերու վրայ ունեցած իր վտանգութիւնը կը շարունակէ ունենալ:

Հալէպի գծին վրայ Ռաճօի և Մէյտանէ-Էքպէզի միջև երկաթուղոյ գիծը քանի մը տեղերէ քանդուած է, և այդ վայրերուն մէջ գտնուող սակաւաթիւ հայ լէգէնտականներու նահանջի գիծը կտրուած, չենք գիտեր թէ Յրանսացիք ինչ կարգադրութիւն պիտի ընեն այդ զինուորները փրկելու համար:

Պօզանդի կողմը, Ուլու-Գըլչա, Պուկար Մատէն մեծ թուով միլիոններ համախմբուած են և բացէն կը յարձակուին այդ կողմերէն անցնող դարձողներուն թէ ամեն կողմէ պիտի

յարձակին Կիլիկիոյ վրայ, եւ արդէն Կիլիկիոյ հիւսիսային ծայրէն, Հաճընոյ կողմէն սկսած և ինչպէս վերը ըսինք Հաճընի գիւղերը յարձակում են իր կայ եղած են:

Սոյն օրոք, Կարս-Բ գարէն 3 ժամ հեռու, Քէլչը-Սուլու կողմը գտնուած մէկ քանի քարաքոյներու ժանտարմաները չէթէններու միացած են, թէև կարծի հայութիւնը Սիս փոխած է, բայց Սիս ալ Անտրլըրընի և Կարսի կողմէն գալիք յարձակողական ուժերու կարծուածին չափազանց զինմանոյ, քանի որ ամիսներէ ի վեր խնդրուած միջոցները և զինուորական ստուար թիւով առաքուները չեղան Պօզանի սանձագին մէջ, ժողովուրդը նոր գաղթի մը սկսած է հեռաւոր վայրերէ և գիւղերէ: Բազմահայ կեդրոններ կը խուժին, թողլով իրենց ինչքն ու բնակչութիւնը, ինչպէս եւ կենդանիները և կեդրոն քաղաքներու մէջ թշուառութիւնը ծայր ստորմասին հասած է: Մերսինէն 5 ժամ հեռու Սէլէվիոյ ճամբուն վրայ թէնմենկ գիւղը չէթէններու կողմէ գրաւուած է: Մերսինի վրայ յարձակումը մտաւորաւ է նոյնպէս Մերսինի լեռնային կողմը էֆրէնկ գիւղը, Մերսինի վրայ քաղաքը ուժերուն կեդրոնն եղած է: 14 թուրք ժանտարմաներ անցած են անոնց կողմը...

Ամեն կողմ մասնակի ջարդեր և սպանութիւններ անպակաս են: Հաճընի առաջնորդը Սարաճեան եպս. շարքի մը առաջ Հաճընոյ և Սիսոյ մէջտեղ յարձակում կրեց չէթէններէն և մազապուր աղատեցաւ իրեն ընկերացող հայ ժանտարմաներու շընորհիւ, որոնցմէ մին ծանրապէս վիրաւորուած է:

Այս տեղեկութիւնները, որոնք խիստ դուռն են, կը ներկայացնեն Կիլիկիոյ հայութեան ընդհանուր ահազանգը: Չուէնք որ և է վտանգելի յեղանակէտ, մեր ձայնը յաճախ անխելի կը մնայ տեղական իշխանութեանց մօտ: Եթէ եւրոպական միջազգային կտրուկ միջոցներ ձեռք չառնուին, իսպառ ոչնչացած ենք:

Կեդրոնին—այսինքն Ատանայի մասին— խօսիլ աւելորդ է. թրքութիւնը հայ ընդհանուր նշանակէտ ընտրած է Ատանան: Շատ ապացոյցներ ունինք որ ամենատակաւի հարուածը պիտի տրուի Ատանայի, ուր 60-70 հազար ներկայ հայութիւնը, որքան տլ թշուառ և անօթի վիճակի մէջ ըլլայ, թուրքին տէքին փուշ մը եղած է միշտ կը ցաւիք և կը խորհինք թէ Մարաշի հայութեան նման անպաշտպան և աննեցուկ պիտի մնայ ու պիտի լքուի իր հայրենիքը, եթէ եւրոպական միջազգային ազդու միջոցներ ձեռք չառնուին:

Օգնութիւն, օգնութիւն, օգնութիւն...

ԱՏԱՆԱՅԻ

Տարիներով ու գարերով իր հայրենիքէն վտարանդուած այս ժողովուրդին մէջ, նոյնիսկ մեծ եղեռնին ամէնէն սարսափոտ օրերուն, ես տեսայ անպատի ոսկորներուն վրայ հսկող խիստկերտ աչքին մէջ այս անմաք հաւատքին առկայ յիշելը:

Շատ քիչեր միայն այդ արհաւիրքի օրերուն կորսնցուցին իրենց հաւատքն ու իտէալը, իսկ մեծամասնութիւնը նոյն իսկ գերեզմանի առջև, նոյն իսկ իւր սիրելիներուն ոսկերու-

տիքը գրկած, իր պինդ սեղմած սիրելի գանկերուն վրայ կարգոց գոյութեան ու փրկութեան գեղեցիկ հաւատքը:

Անտպատէն ու բռնութեան ձեռքառուած իւրաքանչիւր հայ կնոջ ինծի ուղղած առաջին հարցումը կ'ըլլար «Փրկուեցա՞ք սրբազան»:

Բարեկամներ,

Տարիէ մը ի վեր երբ թուրքի զինուորական ճիւղային կազմը խորտակուեցաւ, երբ երոպական ուժերի ան գրաւել Պօլիսն ու Պաղատա, Հիւսանն ու Կիլիկիա, այն համոզումը ունէինք թէ այս բռնաշարժար ժողովուրդին համար հնչած է սուրբութեան ժամը:

Հոգեկան հրճուանքի ինչ յորդառատ զեղումներով ծափողունեցինք փրկութեան աւետար:

Եւ սակայն այսօր ինչ եղերական կրկներկերով կը պարզուին մեր տեսութեան առջև, որքան դուռն է փոխան երազուած փրկագործութեան սկանառես ըլլալ մահուան գալարումներու:

Ո՞րք ենք, ո՞րք կ'երթանք, տակաւին որոշ չենք գիտեր: Մեր բուրիւն ըզմանքները փարած կը մնան ազատութեան գերագոյն հաւատքին նոյն իսկ նորանոր ջարդերու և ցաւառնալիքներու առջև:

Եւ աւա՞ղ, միս միւսակ ենք, մտանուած բարեկամներէ, միս միւսակ ցաւին, զրկանքին, արիւնին մէջ, միս միւսակ կտորածի և բռնաբարութեաց սպանալիքին առջև, և տակաւին այս ժողովուրդը գլուխ չի ծռէր, ուրանալու համար իր ազգային իտէալն ու հաւատքը:

Այս հանդիսաւոր պահուն ազգագատին հանդէպ շատ աւելի դաւաճաններ են լուռ ուրացողները քան այսօրու դատաւիքները: Իսկ այդ լուռ ուրացումը ուրիշ բանով չէ կարելի արտայայտել քան սառն անտարբերութեամբ և դաւաճան լուսթեամբ հանդէպ եղբայրական աղերսալի կոչերուն:

Ըսէ՛ք, արդեօք կա՞յ կոշ մը լուռի սրտառուչ քան այն որ կուգայ Կիլիկիոյ սահմաններէն, 150000-նոց ժողովրդէ մը որ արհաւիրքի չորս երկուր տարիներուն կրէիլ անապատներու մէջ տառապանքի լեղին քսմելէ ետք, հաւատոց թէ վերջ գտած կրնան ըլլալ իր ցաւերը, և ոտնաբալիկ ու անօթի եկաւ իր ընտանեկան կիսանքը պրպտել, իր քայքայուած ու կործանած բոյնը վերականգնել, նոր կեանք, նոր ընտանիք, նոր գործ և նոր երջանկութիւն թըրուակել, և որ յանկարծ թրքական մահացու գնդակներու տարափին կենթարկուի, թուրք նոր դաւաճանութեան դէմ իր զոյուլթեան հարցը իր իսկ վերուոր ձեռքով վճռելու դառն հարկին տակ կը գտնէ ինքզինք, որ աննման Ձէյթունի և Հաճընի քանդումին նախորեակին առջև կ'զգայ ինքզինքը:

Մեծ է վտանգը և օրէ օր կ'ստանայ աւելի սպառնական հանգամանք մը: Եթէ ձեռք եղբայրական ձեռքերը չերկարին, կը վախճամ որ գերեզման մը միայն ունենանք Կիլիկիայէն:

Եւ այնուհետև որո՞ւն համար այն ուրախութիւնը որ խոստացուած է իբր հոնձք արցունք և արիւն ցանողներուն, գիսկներու համար արդեօք:

Բարեկամներ,

Այս աղբը կ'սպրի իր դարուոր զոյուլթեան ամէնէն պատմական ու ճգնաժամային ըրգէները, բողոքին պարտականութիւնն է իր զոհարեութեան մեծագոյն ու լուսագոյն բաժինը բերել կատարելով ընդուն համար փրկութիւնը: Մեր պարտքն է զգալ վտանգին ահագնութիւնը, ըստ այնմ սիրել հայրենիքը, և այն համեմատութեամբ նուիրարբերել անոր:

Բայց սպանով ըլլանք թէ կէս սէր մը կէս մտանութիւն մըն է, կէս զուհողութիւնը կէս չարիք մը:

Մի սահմանափակէք ձեր սէրը ընտանեկան ճղճիմ սահմաններու մէջ, այդ փոքր գաւառականութիւն մը պիտի ըլլաւ, հայ կիներ ու օրիորդը, ուր որ ալ գտնուին, մեր մայրն ու քոյրն են, մենք անոնց համար պարտինք անվարան ընել ի՛նչ որ պիտի ընէինք մեր տան մէջ մեզի բնակակից մեր մօր կամ քոյր վրկութեան համար:

Ա՛լ օտարներ չենք, այլ կղտոյրներ ու քոյրեր:

Ի հարկին ծախսեք մեր տուն ու պերճանքերը:

Մեր այդ անբաղդ քոյրերն ու մայրերն ալ ունէին իրենց թանկարժէք պերճանքները սրոնցով այսօր իրենց դահիճներն հարէմները կը զարդարեն:

Հայ կիներ ու աղջիկներ մերկ են այսօր անապատին կիզիլ արևուն տակ կամ տաւրոսեան սառնամանիքներու մէջ, անոնք մերկ են արքազան մերկութեամբ ու կը տանին զայն յունու ազգի և հայրենիքի:

Ես կողքում հազուած մերկութիւնները, զարդարուած մերկութիւնները որոնց մէջ կը պահուին իսկական աղտոտութիւնները:

Երբ այսօր տխուր դիպուածով մը իրարու կը հանդիպինք, ներիցէք եթէ չկարողանամ փաղաքշական բառեր հնչեցնել ձեր ակամքներուն:

Ճառապանքի մէջ լոգացող հոգիէ մը կեղծաւորութիւն մի սպասէ՛ք, անկարող եմ այդ բանին:

Իզմիրի հայութեան վիճակուած է հրաշքներ գործել իր Կիլիկիան եղբայրներու փրկութեան գործին մէջ, Տուէ՛ք կատարելու համար այդ հրաշքը, և դուք ամէնէն ազնուական գործի մը մտքուր մշակները եղած պիտի ըլլաք:

Ապա թէ ոչ պատմութիւնը չի պիտի լամենայ խարանիլ անողոքաբար ձեր անունը «Կիլիկիա մեռաւ մտասմբանոր համար որ Ձմբուհահայը ուրացաւ»:

Այդ հոտոտոտիքը պիտի գրանցէ խնայիլ ձեզի:

Ուրիմայ հայրենակիցներ, երկրն տրանքի հանդիսաւոր պահեր կապրինք, կամ մեր կուրծքէն պիտի խըլենք ու նեղեցք մեր հայաւ արտերը զառնալու համար վարթում սչնչութիւններ, և կամ պիտի գուրգուրանք այդ արտերուն վրայ, և անստղով անոնց ազնուական թիւղաբութիւններուն, պիտի կատարենք սասպտական ժեսթեր, ու անվարան պիտի բերենք մեր զոհարեութիւններուն ամենէն լայն ու ճոխագոյն բաժինը ի փրկութիւն մեր վտանգուած եղբայրներուն:

Օգնէ՛ք

Ազգային Անցուկարմ

Կիրակի առաւօտ երկսեռ հայութիւն լեցուած էր Ս. Ստեփաննոսի տաճարը: Գիր. Մուշեղ Լիք. Սերոբեան, ինչպէս նախապէս ծանուցուած էր, խօսեցաւ ցնցող ու գեղեցիկ քարոզ մը, որու ամփոփումն կ'հրատարակենք մեր ներկայ թիւով:

Եկեղեցական արարողութիւնէն ետք Մուշեղ Ս. Առաջնորդարանի մէջ ընդունեց զանազան ազգայիններու այցելութիւնն, ինչպէս նաև հայ սպայից միութիւնը:

Ապա ընկերակցութեամբ Տեղապահ Հօր, Գեր. Տրդատ Ս. Ի և Պ. Կ. Արքա. համեստի այցելեց Ա. Կ. Ուր և ամբողջ յարկերի պատեղէ վերջ ներկայ գտնուեցաւ որբանոցի ոյոյ-սքեութիւններու մարզանքին և քանի մը բառեր ուղղեց որբերուն, ջանալեբական և յուսադրիչ խօսքեր: Ապա հիւրերն հիւրասիրուեցան ժողովարանն, ուր գումարուած էր վարական խորհուրդը: Տրդատ եպ. Մուշեղ եպ. Պ. Արքա. համեստի սրբանոցի տաճարին մէջ արձանագրութիւններ ըրին:

Ա. գա յատկապէս շնորհաւորեցին վարչութեան ատնապետ Պ. Միհրան Ազնուորեանն, այս տիպար որբանոցի

հել այս ժողովուրդը իր ոչ նուազ դաբաւոր զրկանքի, հալածանքի, կտտութեան արիւննոտ ճամբուն վրայ:

Կարիւնէն Տէր զօր. Արարատէն Տաւրոս տաճանքոտ ուղիին վրայ երբ իլեախն նայեցաւ ան, և սառ իր կործանուող առնները, իր աւերուող քաղաքները, լացաւ, բայց չի զարգեցաւ բնաւ յուսալէ թէ արցունքով ցանուածը ազատութեամբ և խնդութեամբ պիտի բեզմաւորուի:

Օր-Արտոսեան Տ. Պատգամաբան

Պ. ՉԱՔԻՍ Ե. ՉԱՔԻՍ
ԽՕՍ ԵՑԵԱԼՔ

Իդի 14 Մարտ 1920

Իբր հիմնադիրն իր ընկերակիցնե-
րուն հետ իրենց սքանչելի անունն և խո-
րին գոհունակութիւնն յայտնելով և

—Նրկուշարթի օր Առաջն. Տեղա-
պահ Հայրն և Մուշեղ Ս. խորհրդակ-
ցական ժողով մը ունեցած են Աւե-
տիքեան եղբարց վաճառատունն ծա-
նօթ Հայ վաճառականներու հետ և

—Հայ կարմիր Խաչի Իգմբրի վար-
չութիւնը ստանձնած ըլլալով Հայ Բա-
նակին հազուստեղէնի պէտքերուն

ՆՇԱՆԱՌՈՍՈՒԹԻՒՆ

Նշանախօսութիւն մը Պ. Մկրտիչ
Ս. Պալապանեանի և Օր. Վերտին Մ.
Քէշիշեանի միջև որ տեղի ունեցած է

Օր. Վերտին սիրուն օրինակ մըն է,
օժտուած հայկական մաքուր համե-
տութեամբ մը և սան տիկինի մը

Պ. Մկրտիչ, —օրդին է բաղմարդին
և երկարամտայ աշխատաւոր, ձերու-
նազարդ Պ. Սարգիս Պալապանեանի,

Խմբագրութիւնն իր շնորհաւորու-
թիւններն կ'ընկերակցէ խօսեցեալներուն

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Ա. Կ. Ո. — Պ. Մկրտիչ Ս. Պալա-
պանեան Յ. Գ. (Գ. Պ.):
Հայ Կ. Պալապանեան Պ. Պ. Պողոս Գա-
րագաշեան Ծ. Սարգիս Էկիւնեան Ծ

Տեղական Լուրեր

ԱՅՍ ԵԱՔԹՈՒԱՆ մէջ յոյն նորա-
գիրները պէտք է ներկայանան զօրա-
կոչի գրասենեակները Կրտսի թէ նոր

Միութիւնները և ակումբները այ-
սօր ժողով պիտի գումարեն զինուո-
րագրութեան հարցով զբաղելու հա-

ՔԱՂԱՔԱՆ հասած է «Տէլի Էքս-
քրէս» թղթակից Մր. Բէրտին Ֆիլիքս
Տեղական թերթ մը կը գրէ թէ 5

ԳՕՃԱՄԱՆԵԱՆ ԵՒ ԿԻՆՁԵԼՈՆ

ՊԱՃԱՌԱՏՈՒՆ
ԱՅ.ՆՕՐԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՒ 109
Հատկուան յատուկ տրմի սէզօն

ՀՐԱՊԱՐԱԿ

Table with 2 columns: Item Name and Amount. Includes items like Գ. — Զէբը, Լօնտօն, Նիւ-Յօրք, Բարիզ, Լոնտ, Աթէնք, Պերլին, Վիէննա, Զուրիցիա, Անգլ. ոսկի, Տօլար, Յրանք, Լիր. Իտալ., Տրալմի, Բուպլի, Մարք, Քուրօն, Ոսկի.

Նոր Բաշնիք ՊՕՂՈՍ ՊԱԼԱՊԱՆ

Բացուած է «ՆՈՐ ԲԱՂՆԻՔ»-ը
Այլ - Բարասքէյի փողոցը գտնուող
Ամեն առաւօտ ժամը 10էն մինչև

ՇՐՋԱԲԵՂԱԿԱՆ

Իդի 16 Օգոստ. 1919
Տ.
Պատիւ ունինք ներկայից տեղե-
կացեալ Ձեզի որ տեղույս վրայ. Այլ

ԱՆՏՈՆԵԱՆ ԵՒ ՉԱՔԻՍ

անուան տակ, որ պիտի զբաղի մա-
նիֆաթուրաի, ասուեղէններու և այլն
գործերով:
Լրայոյս որ պիտի պատուէք Ձեր
վստահութեամբ. ինչպէս անցեալի մէջ,

Վ ԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՃՆՇՈՒՄ ԹՈՒՐԿԻՈՑ ՎՐԱՅ

Լօ. տոնէն կը հազարէն թէ Պ. Վէնիզէլոս ներկայ եղած է, հինգշաբթի օր

«Տէլի Թէլէկրաֆ»-ի համեմատ հեւլին կառավարութիւնը յայտարարած է

«Տէլի Թէլէկրաֆ» Պօլսոյ գրաւման մասին մամուլին յարուցած

ՊՕԼՍՈՑ ԳՐԱՒՈՒՄԸ

«Տէլի Թէլէկրաֆ» Պօլսոյ գրաւման մասին մամուլին յարուցած

Շարժման մէջ եղող զինուորական ուժերը բուարար են այդ ձեռնարկին

ԹՈՒՐԿԻՈՑ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Համաժողովը Մարտ 12ին կազմած է շատ կարեւոր նիստ մը, ուր հաս-

ԹՈՒՐԿԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գեր. Խորհուրդը ուրբաթ օրուայ նիստին մէջ քննած է թուրք ոստիկանու-

ԲԱՐՁՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Տէլի-Թէլէկրաֆ կը հազարէն որ Բարձրագոյն Խորհուրդը ընդունած է Պօլ-

ԹՈՒՐԿԻՈՑ ՄԷՋ ԳՐԱՒՈՒԵԼԻՔ ՎԱՅՐԵՐԸ

Բացի «Թան»էն, միւս ֆրանսական թերթերը տեղեկացած են թէ Համա-

ՅՈՒՆԱԿԱՆ ՆՈՐ ՅՈՒՇԱԳԻՐ

Յունական պատուիրակութիւնը Հաշտութեան Համաժողովին մօտ, նոր

ԱՋԳԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ազգերը Ընկերակցութեան խորհուրդը գումարուելով զբաղած է Ռուսիոյ

ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Համաժողովը իր Աւրբաթ օրուայ նիստին մէջ քննած է բարձրագոյն էր-

ՊՕԼՍԵՆ ՅԵՏՈՑ

«Տէլի-Մէլ»-ի համեմատ, Պօլսոյ զինուորական գրաւման պիտի յարուցէ

ՅՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ԿՈՉԸ

Վերջին ջարդերու տուժիւ Պօլսոյ Յոյն Պատերազմը Համաժողովին նոր

ՃՕԼԻ, ԱԼԷՎՐԱ, ԸՆԿ. ԼՄԹՏ.

ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱՆԱԼՔ ԵՒ ՀԱՅՐԱՅԹԻՔ - ԱՄՈՒՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՔ

Կանոնաւոր երթելի Լոնտոնի եւ Լիւրբուրի եւ Մեծն Բրիտանիոյ թոյր նաւահանգիստներուն համար: Նմանապէս ասեմ քաւենիկնգ օր սպասարկութիւն նիւ-օրֆի համար:

Գործակալի «Բաշաթիկ» ապահովագրական հրդեհի ընկերութեան ըսք

Տիար Ժ. Տ. ԱԼԷՎՐԱ ԵՒ ՈՐԴԻՔ

ՆԱԽԱՐԿՈՒՆԵՐ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԻՐԷԱ-ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՏՊԱՐԱՆԻ ՄԱՄՈՒԼԻԱՆ

ՀԵՄՆՈՒՄ 1883ԻՆ

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպագրուին գրքեր, գրքոյկներ, տետրակներ, յայտարարու-

թիւներ, հարսանեկան հրաւիրագիրներ, զեկուցատոմսեր ու ժահագրներ ևն:

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակ-ներ, ընկալագրեր, վերջապէս վաճառատան մը վերաբերեալ ամեն տեսակ տպագրական գործեր:

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին տեղեկագիրներ, երկրորդնորու նամակ-հրաւիրա-գրքեր տոմսակներ եւ վերջապէս տպագրական արճեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր:

Ամեն լեզուէ՝ շԱՅԵՐԷՆ, ՅՐԱՆՍԵՐԷՆ, ԱՆԳԼԵՐԷՆ, ՅՈՒՆԱՐԷՆ, ՔՈՒՐԲԵՐԷՆ

ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ՊԵՏՊԻՍՈՒԹԻՒՆ

Ս.Մ.Ն. ՅԵՍԱՆ ԴՈՇՆԱՐՈՎ

Մամուր եւ խնամեալ գործ օրուան գիներու վրայ

Տպարանս քաց է առաօտէ միևնջեւ կես գիշեր

խնդրանկներու համար

Վ Ճ Ա Ր Մ Ո Ւ Ն Ք Կ Ա Ն Խ Ի Կ

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ»

Թերթիս ծաւալը աւելի ընդարձակուած ըլլալով, այժմ ի վիճակի եմք աւելի քայն տեղ մը սաշ ծանուցմանց քաժնիկն, նոյնիսկ եթէ ամեն օր հարկ ըլլայ միևնջեւ ծանուցումն կրկնել, ինչ որ ասկից առաջ ի վիճակի չէիմք ընելու:

Գոհացուցիչ պայմաններ փոխր կամ մեծ, մեկ կամ աւելի ծաւուցմանց համար:

Դիմումներ կ'ընդունուին առտարնէ միևնջեւ կես գիշեր:

Կ Ա Ն Խ Ի Կ Վ Ճ Ա Ր Ո Ւ Ս

ՅԵՐՈՊ. ՊԱՏԵՄԱԶՄԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ
ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ
ԳԵՐՄԱՆ ԳԱՂԱԳԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԸՍՏ ԻՇԽԱՆ ԳԻՒԼՈՎԻ

Պատան Մարշալ կերելի նոյն կարծիքէն էր: 1905ին կ'ըսէր վարչապետին. «Եթէ Մարքը յանձնենք, Շամիլ և Թանճէրի հակառակ մէկէն պիտի կորսնցնենք մեր դիրքը Թուրքիոյ մէջ և սնոր հետ, բոլոր այն ստուերութիւնները և հեռապատկերները որոնք մենք ձեռք բերած ենք երկար և տաժանելի աշխատանքով մը» Անշուշտ այս նկատումը գեր մը ունեցաւ Վիլհելմ Բ. և իր վարչապետի որոշումներուն մէջ:

Մարքի մէջ ֆրանսական թափանցումը իշխան Պիլլոյի թուեցաւ վերականգնումի փորձերէն մին, որուն համար մեզ կարող կը գաւանդի: Եւ ասոր համար է որ 1905ին Վիլհելմ Բ.ին ստիպեց Թանճեր ցամաք զօրք հանել: Այս նախաձեռնարկին պատասխանատուութիւնը կը պահանջէր ինք: Կարուկ կերպով կը մերժէ այն առարկութիւնը, թէ ինք աւելի լաւ պիտի ընէր Տէլքասէի քաշուելէն վերջ ուղղակի համաձայնութիւն մը փնտռէր Ֆրանսիոյ հետ: Ըստ իրեն, Վիլհելմ Բ. Մարքի վրայ տեղի չէր կրնար տալ առանց կորսնցնելու իր հմայքը Թուրքերու և իսլամներու մաս: Միթէ անոնց պաշտօնապէս չէր խոստացած Շամի մէջ, Գերմանիոյ կայսեր տեւական բարեկամութիւնը:

Անցնինք այժմ գրքին այն գլխին, ուր կը գտնուի հեղինակին վերջին մտածումը. «Ալէքզիբրասի համաժողովին վճիռները են նաև բոժոժ մը, զորս մենք պիտի կրնանք շարժել ու զած ատեն, երբ Ֆրանսա այս կարգի նոր ախորժակներ ցոյց տայ» 1909ի փետր. 9ի Մարքեան համաձայնագրի, թոյլ տուաւ պահելու 1906 ի բոժոժները, անոնց աւելցնելով քանի մը հաս ևս, անցուած շահերու ընկե. լակցութեան խոստումին. 1911ի նոյնիմբեր 4ի պայմանագիրը զանոնք բոլորն ալ չէ չնջած:

Մեք Մարքի մէջ կը պահենք մօտ 100.000 զինուոր և հոն տարին կը ծախսենք 250 միլիոն, չէրիֆական կայսրութիւնը միջոցառի վաճառութեան թեան առջև բանալու համար: Բայց մեր թեւորկութիւնը զարգար-

ATLANTIC ASSURANCE
COMPANY, LIMITED.
79, CORNHILL, LONDON E. C. 3.
Կ. Ո. ՈՍԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՒՆ
ԻՉՄԻՐ, ԲԱՍԱԺ ԲԷՇՏԻՄԱԼՃԻՕՂԻՈՒ ՎԵՐԻ ՅԱՐԿ ԹԻՆ 2

ԱՊՈՒՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Կրակի դեմ.
NATIONAL UNION SOCIETY LTD.
LONDON
CENTRAL INSURANCE CO. LTD.
LONDON
Փոխալի.
PHOENIX ASSURANCE COMPANY LTD.
LIVERPOOL
Դիմելոյ մանրամասնութեանց համար.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՆԱԼՆԵՐ
Լ.ՆԻ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ուած է բոժոժներով, որոնց յարմար ժամանակին շարժելը Գերմանիա իրեն կը վերապահէ: «1870էն ի վեր մեր լուծած հարցերու թիւը տկար է, կըսէ իշխան Պիլլոյ. անոնց քով, որոնք կ'սպասեն տակաւին իրենց լուծումին»

Իսկ մենք Ֆրանսացիքս, հսկենք որ Գերմանիա չփորձուի լուծելու այս վերջին հարցերը մեր վրայ թօթուելով Պիամարքի աշակերտներուն բոժոժները:

Ֆրանսացիքսն ապրեցաւ
1914 օգոստ. 4ին Ֆրանսիոյ և Գերմանիոյ միջև պատերազմը յայտարարուեցաւ: Այս էր երեք ամսէ ի վեր Գերմանիոյ և Աւստրո-Հունգարիոյ կողմէ խաղացուած դիւանագիտական կատակերգին ախուսափելի վախճանը: Գերմանիոյ Բարիդի ներկայացուցիչին զած են: Պառօն Շէօն պատրուակ իր թէ գերմանի երկիրը բռնաբարած ըլլալով Գերմանիա «ստիպուած էր Ֆրանսիոյ հետ պատերազմական վիճակի մէջ գտնուելը յայտարարելու» Գաղտնի զօրակոչ ընելէ. մեր հողը խուժելէ, Լիբաւալուրի չէզոքութիւնը բռնաբարելէ և պիտի չէզոքութեան բռնաբարումը ծանուցանելէ վերջ կազան մեզ յայտարարելու թէ մենք ենք որ յառաջ բերինք պատերազմը Գերմանիոյ հետ:

Իտալական կառավարութիւնը, յանձնեց մարքի վիւքօթի վէնսօթաի, անոնց ստաշքն առած էր յայտարարելով իր չէզոքութիւնը. Եւրոպայի մէջ բացուած զանազան կռիւներու մէջ: Այդ լիա յայտարարեց որ, նաւատորմը պիտի պահպանէր ֆրանսական ծովագերքները և պիտի պաշտպանէր ինք իր բոլոր ուժերովը Պիլլոյ չէզոքութիւնը:

1914 օգոստոս 4ի իրիկուան ժամը 10ին, Գերման կառավարութիւնը Ուրէի. Կէօշէնի յանձնեց իր անցազրերը: Ասիկա պատասխանն էր Պիլլոյի չէզոքութիւնը յարգելու Անգլիոյ սպառարութեան եւ Եւրոպական ընդհ. պատերազմը, երկրագործը հրաբուխի մը պէս շարժեցաւ, ցնցեց աշխարհը և ոմանք տակաւին չընտելացած եւ ղեկութեան ահաւորութեան մնացին տարտամ և հեռաւոր սպառնալիքի մը նախազգոցումով պաշարուած:

... և ճակատագրային խորշակը սհա անցած է Եւրոպայի վրայէն. տակաւին արգիւնքները անձամբ կը մնան, և իցիլ թէ նոյնքան ահաւոր չըլլան...

ՎԵՐՋ